ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ԼԵՎՈՆ ԱԶԱՐՅԱՆ

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսեսյանի, իբրև միջնադարյան արվեստի պատմաբանի, անունը դուրս է եկել մասնագետների նեղ շրջանակներից, հարստացնելով անվանի հայագետների և բյուզանդագետների ցանկը։ Ավելի քան կես դարվա իր գիտական գործունեությամբ նա նոր ուղի է բացել հայ միջնադարյան արվեստի ուսումնասիրության բնագավառում։

Ս. Տեր-Ներսեսյանը ծնվել է Կոնստանդնուպոլսում։ Վաղ հասակից կորցնելով ծնողներին, նա գտնվել է մորաքրոջ ու մորեղբոր՝ ճանաչված հայագետ Մ. Օրմանյանի խնամքի տակ։ Մանկությունն անցկացնելով Մ. Օրմանյանի, Գ. Հովսեփյանի ու Կոմիտասի նման ազգային գործիչների միջավայրում, երիտասարդ հասակից արդեն Ս. Տեր-Ներսեսյանի մոտ ձևավորվել են հայ ժողովրդի պատմության ու արվեստի նկատմամբ ունեցած այն հետաքրքրությունները, որոնք կանխորոշեցին նրա ստեղծագործական ուղին։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ս. Տեր-Ներսեսյանը տեղափոխվում է սկզբում Բուլղարիա, իսկ հետո Ժնև, ուր մնում է մինչև պատերազմի վերջը։ Ժնևի համալսարանում հետևում է պատմության և գրականության դասընթացներին և ապա մեկնում Փարիզ։ Սորբոնի համալսարանում նա աշակերտում է ականավոր բյուզանդագետներ Շ. Դիլին ու Գ. Միլեին։ 1919 թ. նույն համալսարանին կից «Էքոլ դե զեթյուդ» գիտահետազոտական հաստատությունում զբաղվում է բյուզանդական արվեստի ուսումնասիրությամբ, իսկ մինչև 1929 թ. միաժամանակ Սորբոնի համալսարանում դասախոսություններ է կարդում բյուզանդական ու հայկական արվեստների մասին։ Արդեն 1924 թ. Ս. Տեր-Ներսեսյանը հանդես է գալիս բյուզանդական ու հայկական մշակույթին նվիրված արժեքավոր հոդվածներով և արժանանում գիտական շրջանների ուշադրությանը։ 1930 թ. նա որպես դասախոս և պրոֆեսոր հրավիրվում է Մասաչուսետսի Վելլեսլ կոլեջ (ԱՄՆ), իսկ

1937—1946 թթ. ստանձնում է արվեստի կենտրոնի նախագահի ու Ֆանսվորդ թանգարանի տեսչի պաշտոնը։ Մինչ այդ՝ 1936 թ., Վենետիկի Մխիթարյանների մոտ պահպանվող XII—XIV դդ. ձեռագրերի և Բարեղամի ու Հովսեփի պատմությունը պարունակող հունարեն ձեռագրերի մանրանկարներին նվիրված երկու աշխատությունների համար նրան շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան։

1946 թ. Ս. Տեր-Ներսեսյանը հրավիրվում է «Դոմբարթն օքս» գիտահետազոտական հաստատություն և Հարվարդի համալսարան (ԱՄՆ), որպես բյուզանդական արվեստի պրոֆեսոր։ Նա Միացյալ Նահանգների Սմիտ կոլեջի և Ուլսոն կոլեջի պատվավոր դոկտոր է, ինչպես և ԱՄՆ-ի միջնադարյան ակադեմիայի անդամ։

Երկարամյա բեղմնավոր գիտական գործունեության և մասնավորապես հայագիտությանը մատուցած ծառայությունների համար 1965 թ. նա ընտրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ։ Հայկական ու բյուզանդական արվեստների պատմության ասպարեզում կատարած ուսումնասիրությունների համար 1970 թ. Անգլիայի հնագիտական ընկերությունը նրան պարգևատրել է հատուկ ոսկե շքանշանով։ Այդ հաստատության հիմնադրման օրից՝ 1707 թ. ի վեր, Ս. Տեր-Ներսեսյանը երկրորդ կին գիտնականն է, որ արժանացել է այդ բարձր պարգևին։

Ս. Տեր-Ներսեսյանի գիտական աշխատությունները պատկառելի թիվ են կազմում։ Մասնագիտական հիմնավոր պատրաստությունն ու հարուստ գիտելիքները նրան հնարավորություն են տվել բացի հայկական ու բյուզանդական արվեստների պատմությունից, թափանցելու նաև ղպտա-եգիպտական, ռոմանո-գերմանական, վրացական, սլավոնական և այլ ժողովուրդների մշակույթի ասպարեզ։

Ս. Տեր-Ներսեսյանի աշխատություններից մի քանիսը շրջադարձային նշանակություն ունեցան հայ արվեստի պատմության ուսումնասիրության գործում։ Դրանցից առավել կարևորն է համաշխարհային ճանաչում գտած 969 թ. «Էջմիածնի ավետարանի» մանրանկարներին նվիրված ուսումնասիրությունը[1]։ Այս ուսումնասիրությամբ Ս. Տեր-Ներսեսյանը, վիճարկելով Ստրժիգովսկու տեսակետը, հաստատեց այն միտքը, որ «Էջմիածնի ավետարանի» մանրանկարները հայկական են և կատարվել են X դ.։ Նա նախ ցույց տվեց այն տարբերությունները, որ կան «Էջմիածնի ավետարանի» մանրանկարների և սիրիական 586 թ., այսպես կոչված, «Ռաբուլեի» ավետարանի մանրանկարների միջև (Ստրժիգովսկու հիմնական գրությունը)։ Բացի այդ, նա ապացուցեց, որ «Էջմիածնի ավետարանի» սկզբում եղած մանրանկարների ոճը ամբողջությամբ առնչվում է IX—X դդ. հայկական ու բյուզանդական ձեռագրերի մանրանկարների հետ։ Այս հարցի ճիշտ լուծումը կարևոր նշանակություն ունեցավ հայկական միջնադարյան արվեստի ակունքներն ու հարևան ժողովուրդների արվեստների հետ ունեցած առնչությունները պարզաբանելու համար։

Հետագայում «Էջմիածնի ավետարանի» ուսումնասիրությունը Ս. Տեր-Ներսեսյանը ամբողջացնում է ձեռագրի վերջում եղած չորս մանրանկարնե-

---

[1] „The Date of the Initial Miniatures of the Etchmiadzin Gospel", The Art Bulleten, XV, 1933.

ին նվիրված հատուկ հոդվածով[2], անվերապահորեն ապացուցելով, որ դրանք կատարված են VI—VII դդ., հայ նկարիչների ձեռքով, և, որ առավել կարևոր է, այդ ու դրան նախորդող ժամանակաշրջանում Հայաստանում եղել է բավականին զարգացած գեղանկարչություն։

Իր մի այլ աշխատության մեջ[3] Ս. Տեր-Ներսեսյանը վիճարկում է երկար ժամանակ ճանաչում գտած այն տեսակետը, թե իբր հայերը մինչև X դ. չեն ունեցել ազգային գեղանկարչություն։ Վրթանես Քերթողի (VI դ. վերջ—VII դ. սկիզբ) «Յաղագս պատկերամարտութեան» թղթի պատմաբանասիրական քննությամբ նա նախ ճշտում է դրա ժամանակաշրջանը (VII դ.), ապա անժխտելի փաստարկումներով ցույց է տալիս, որ Հայաստանում արդեն VII դ. գոյություն է ունեցել զարգացած նկարչություն, որի արմատները պետք է փնտրել նախորդ շրջաններում։ Հետագայում այս տեսակետը հաստատվեց ավելի կոնկրետ փաստերով։

Սիրարփի Տեր-Ներսեսյանը հետևողականորեն զարգացնելով իր դրույթները, այս աշխատություններում կարողացավ հաստատել հայկական միջնադարյան արվեստի՝ ձևավորման համար հանգուցային հանդիսացող մի պրոբլեմ (միջնադարյան հայկական արվեստի գենեզիսի հարցը), որը սկզբունքային նշանակություն ունի վաղ միջնադարյան հայկական արվեստի ուսումնասիրության համար ընդհանրապես։

Միջնադարյան հայ մշակույթին վերաբերող գրեթե բոլոր հարցերը հետաքրքրում են Ս. Տեր-Ներսեսյանին։ Սակայն մանրանկարչությունը միշտ էլ գտնվել է նրա ուշադրության կենտրոնում։ Այս առումով խիստ արժեքավոր են արտասահմանյան մասնավոր հավաքածուներում ու թանգարաններում պահպանվող հայերեն ձեռագրերի մանրանկարներին նվիրված նրա հետազոտություններն ու հրապարակումները, որոնք գիտական շրջանառության մեջ դնելով մինչ այդ անհայտ բազմաթիվ արժեքավոր ձեռագիր նյութեր, մեծապես նպաստում են հայկական մանրանկարչության ուսումնասիրության հետագա ընթացքին։ Այդպիսին է, օրինակ, նրա վաղ շրջանի աշխատություններից մեկը[4]։ Այս աշխատության մեջ մանրամասն ոճական վերլուծման ենթարկելով Վենետիկի Ս. Ղազար վանքում պահպանվող խոր ձեռագրերի մանրանկարները, հեղինակը պարզաբանում է XII—XIV դդ. հայկական մանրանկարչության առանձնահատկությանը վերաբերող մի շարք կարևոր հարցեր։ Այնուհետև, հաջորդաբար հրապարակվում են նրա աշխատությունները՝ նվիրված Չեստեր Բիտի մասնավոր ժողովածուի[5], Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահի[6] և Բալտիմորի Ուելտերի պատկերասրահի[7] հայերեն ձեռագրերին։

Ընդգրկելով տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող բազմաթիվ նոր նյութեր, այս աշխատությունները հայկական մանրանկարչությունը ներկա-

[2] „La Peinture Armeniene au VIIe siecle et les miniatures de l'Evangile d'Etchmiadzin", Actes du XIIe Congres International des Etudes Bysantine, 1964, tom III.

[3] „Une apologie des imanges du septieme siecle", Byzantion, 1944—1945.

[4] „Manuscrit armeniens illustres des XIIe, XIIIe et XIVe siecles de la bibliotheque des pers Mekhitaristes de Venis, Paris, 1937.

[5] „The Chester Beatty Library: A Catalogue of the Armenian Manuscripts", vol. I, II, Dublin, 1958.

[6] „Armenian Manuscripts in the Freer Gallery", Vashington, 1963.

[7] „Armenian Manuscripts in the Walter Art Gallery", Baltimore, 1973.

յացնում են պատմական ընթացքի մեջ։ Դրանք գիտավերլուծական ուսումնասիրություններ են և չեն նմանվում հանրահայտ ձեռագրացուցակներին, որոնք հիմնականում ձեռագրերի մասին սոսկ փաստացի տեղեկություններ են հաղորդում։ Ավելին, Ս. Տեր-Ներսեսյանը չի սահմանափակվում միայն տվյալ հատորում ամփոփված ձեռագիր հուշարձանների ուսումնասիրությամբ և պատկերն ամբողջացնելու նպատակով, հարկ եղած դեպքում, լուծում է միջնադարյան հայկական արվեստին վերաբերող բազմաթիվ հանգուցային հարցեր։ Սարգիս Պիծակի ստեղծագործության գնահատման առիթով նա, փաստորեն, բնութագրում է XIV դ. կիլիկյան մանրանկարչության հիմնական առանձնահատկությունները։ Այդպես է վարվում նաև XIII դ. կիլիկյան մանրանկարչության պատմության համար կարևոր այնպիսի հուշարձանի նկատմամբ, ինչպիսիք են, այսպես կոչված, «Ֆրիրի ավետարանի» մանրանկարները։ Եվ, վերջապես, նշանակալից է Բալթիմորի ժողովածուում պահպանվող Թորոս Ռոսլինի պատկերազարդած 1262 թ. ձեռագրի մանրանկարների ուսումնասիրությունը։ Միջնադարյան հայկական մշակույթի այդ խոշորագույն ներկայացուցիչներից մեկի ստեղծագործությունը վաղուց է գրավել գիտնականների ուշադրությունը։ Սակայն մինչև հիմա մենք չունենք Ռոսլինի ստեղծագործությունն ամփոփող մի ուսումնասիրություն։ Փաստորեն առաջին անգամ ամբողջությամբ հրապարակելով Թորոս Ռոսլինի գլուխգործոցներից մեկը, դրանով Ս. Տեր-Ներսեսյանը մեծապես հարստացնում է Ռոսլինի մասին մեր պատկերացումները։ Ի դեպ, Ս. Տեր-Ներսեսյանը այժմ մի մենագրություն է պատրաստում Թորոս Ռոսլինի մասին, որը, անշուշտ, խոշոր ներդրում կլինի հայկական արվեստի պատմության ուսումնասիրության ասպարեզում։

Վերոհիշյալ աշխատություններն արժեքավորվում են նաև նրանով, որ հայկական մանրանկարչությունը թերևս մինչ այդ նման բազմակողմանի ու խոր մասնագիտական քննության չէր ենթարկվել։

Գիտնականի աշխատությունների հաջորդ խումբն ավելի ամփոփ ու լայն պատմական ընդգրկում ունի։ Ս. Տեր-Ներսեսյանի 1936 թ. Նյու-Յորքում կարդացած հայկական արվեստի պատմության դասախոսությունների շարքը հետագայում հրապարակվել է որպես առանձին գիրք[8]։ Այս գրքում Հայաստանի և բյուզանդական կայսրության հարաբերությունների պատմական տեսության հետ մեկտեղ, հեղինակն առաջին անգամ հանրամատչելի ձևով ներկայացրել է հայկական ճարտարապետությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը և մանրանկարչությունը։ Ս. Տեր-Ներսեսյանի մյուս աշխատությունն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը, սկսած հնագույն շրջաններից մինչև Կիլիկիայի հայկական թագավորությունը[9]։ Բնույթով գիտահանրամատչելի այս աշխատությունը, ինչպես և նախորդը, նպատակ ունի լայն շրջաններին ծանոթացնել հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հիմնական շրջանների հետ, շեշտը դնելով գրականության, ճարտարապետության, նկարչության ու քանդակագործության վրա։

Հայկական միջնադարյան ճարտարապետության ու արվեստի նշանավոր հուշարձաններից է Աղթամար կղզու 915—921 թթ. կառուցված Ս. Խաչ եկե-

[8] „Armenia and the Byzantine Empire", Harvard, 1945.
[9] „The Armenians", London, 1969.

ղեցին։ Եթե այդ հուշարձանի ընդհանուր հորինվածքը հիմնականում կրկնում է VII դ. արդեն դասական ձևակերպում ստացած հայկական ճարտարապետության ավանդույթները, ապա արտաքին ու ներքին դեկորատիվ հարդարանքով (քանդակներով ու որմնանկարչությամբ) այն արվեստի ընդհանուր պատմության բացառիկ երևույթներից է։ Ահա այս ուշագրավ հուշարձանի ուսումնասիրությանն է նվիրված վաստակաշատ գիտնականի մենագրությունը[10]։

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու նկատմամբ հետաքրքրությունը սկսվել է տակավին անցած դարի 30-ական թվականներից (Օ. Լեարդ, Վ. Բախման, Ի. Ստրժիգովսկի, Հ. Օրբելի, Ե. Լալայան և ուրիշներ)։ Դրանից հետո Աղթամարի հուշարձանն իր արժանի տեղն է գրավել հայկական ճարտարապետությանն ու արևելյան քրիստոնեական արվեստին վերաբերող համարյա բոլոր աշխատություններում։ Սակայն այդ ուսումնասիրությունների առանցքը հիմնականում ճարտարապետությունն էր (բացառությամբ Հ. Օրբելու)։

Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունը մի կապիտալ ուսումնասիրություն է, որը Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետությունը, քանդակագործությունը և որմնանկարչությունը ներկայացնելով միաձույլ շաղկապվածության մեջ, ամբողջացնում է այդ հուշարձանի ընդհանուր գաղափարական ու արվեստային կերպարը։ Ի լրումն դրա՝ հարուստ համեմատական վերլուծությունների միջոցով գիտնականը կարողանում է գնահատել հուշարձանի պատմական արժեքը ոչ միայն հայկական արվեստի, այլև ընդհանուր քրիստոնեական արվեստի պատմության մեջ։ Ընդ որում, հուշարձանի կերպարային ու դեկորատիվ հատկանիշների ակունքներն առաջին հերթին բխեցնելով վաղ միջնադարյան հայկական ճարտարապետությունից ու արվեստից, Ս. Տեր-Ներսեսյանը պատկերագրական ու ոճական բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս քանդակների՝ ժամանակի համար եզակի լինելու հանգամանքը և այն, որ որմնանկարների պատկերագրական սիստեմը 3 դարով նախորդել է Արևմուտքին։ Հեղինակի լայն գիտելիքները նրան հնարավորություն են տվել համեմատական վերլուծությունների ժամանակ չսահմանափակվել միայն հարևան քրիստոնյա ժողովուրդների մշակույթով։ Այս պատճառով էլ նրա եզրակացությունները համոզիչ են, իսկ պատմական երևույթները դիտարկվում են տարբեր տեսանկյուններից։

Այստեղ համառոտակի ներկայացվեցին Ս. Տեր-Ներսեսյանի հայագիտական աշխատությունների մի մասը միայն։ Սակայն նրա գիտական-ստեղծագործական ուղին, հիմնականում, ընթացել և ընթանում է երկու ուղղությամբ՝ հայկական միջնադարյան արվեստ և բյուզանդական արվեստ։ Ս. Տեր-Ներսեսյանի տեսահորիզոնից երբեք չեն հեռանում հայ-բյուզանդական հարաբերությունները։ Ընդ որում, նա կարողանում է խուսափել այն ուսումնասիրողների սխալից, որոնք չափազանցնելով բյուզանդական արվեստի նշանակությունը, հայկական (և ոչ միայն հայկական) միջնադարյան արվեստը դիտում են որպես բյուզանդականի մի ճյուղավորում կամ նրանցից կախյալ երևույթ։ Ս. Տեր-Ներսեսյանի ուսումնասիրությունների առանցքը ազգային առանձնահատկությունների ձևակերպման ընթացքն է։ Եթե նրա նախորդներին (Ստրժիգովսկի, Միլլե, Կոնդակով և ուրիշներ) ավելի հետաքրքրում էին

[10] „Aghtamar, Church of the holy Gross", Harvard, 1965.

ազգային առանձին դպրոցների ընդհանրությունները Բյուզանդականի (Կոստանդնուպոլսի) հետ ու կրած ազդեցությունը, ապա Ս. Տեր-Ներսեսյանը դրանց զուգահեռ առաջ է քաշում ազգային ինքնուրույնության պրոբլեմը։ Սակայն դա բոլորովին չի նշանակում, թե Ս. Տեր-Ներսեսյանը հայկական միջնադարյան արվեստը դիտում է որպես մյուս ժողովուրդների մշակույթից անջատ մի երևույթ։ Փաստական հարուստ տվյալների հիման վրա գիտնականը հետևում է հայկական միջնադարյան արվեստի պատմության ընթացքին, դիտելով այն լայն՝ համաշխարհային կուլտուրայի ֆոնի վրա, բացահայտում է մեր արվեստի կապերն ու աղերսները հարևան ժողովուրդների արվեստների հետ։ Տարբեր ժողովուրդների արվեստների ազդեցություններն ու հարաբերությունները Ս. Տեր-Ներսեսյանի աշխատություններում միանգամայն կոնկրետ ու գիտական մեկնաբանություն են ստանում՝ մեծապես նպաստելով հայկական միջնադարյան արվեստի ձևավորման ու զարգացման պրոբլեմի լուծմանը։ Ահա հենց այս հանգամանքն էլ նրան հնարավորություն է տալիս ճիշտ պարզաբանելու հայկական միջնադարյան արվեստի բազմաթիվ հարցեր։

Գիտական գործունեության հիմքում ունենալով պատմահամեմատական ու պատկերագրական մեթոդը և դրանով իսկ հանդիսանալով իր նախորդների (Շ. Դիլ, Գ. Միլլե, Ի. Ստրժիգովսկի, Ն. Կոնդակով և ուրիշներ) արժանի ժառանգորդը, Ս. Տեր-Ներսեսյանը չի բավարարվում միայն պատմաբանասիրական ու պատկերագրական հարցերի ուսումնասիրությամբ։ Նա պատկերագրությունը դիտում է որպես ձևաբանական ու ոճական վերլուծության բաղկացուցիչ մաս, դրանով իսկ տարբերվելով արդեն հնացած «պատկերագրական մեթոդին» հետևողներից, որոնք բովանդակությունը մեխանիկորեն անջատում են ձևից։ Պատմական, մատենագիտական նյութերը, ինչպես և պատկերագրական հարցերը նրա համար առաջնային լինելով հանդերձ, արվեստի խնդիրները լուծելու օժանդակ միջոցներ են։

Այսպիսով՝ Ս. Տեր-Ներսեսյանի աշխատությունները հայկական միջնադարյան արվեստի ուսումնասիրության ասպարեզում հիմք դրեցին արվեստի ոճա-ձևաբանական հարցերի ուսումնասիրությանը, որը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող օբյեկտը գնահատել առաջին հերթին որպես արվեստի արժեք։ Սրանով հաստատվում է այն իրողությունը, որ միջնադարյան հայկական արվեստով զբաղվողը պետք է օժտված լինի պատմաբանասիրական ու արվեստագիտական կարողություններով։ Ուսումնասիրության նման մեթոդը ժամանակակից արվեստաբանության հիմնական խնդիրն է, մի գիտություն, որի լավագույն ներկայացուցիչներից է Ս. Տեր-Ներսեսյանը։

Առաջնորդվելով «արվեստի պատմությունը սերտորեն հետևում է քաղաքական իրադարձությունների ընդհանուր ուղղությանը» սկզբունքով և ելակետ ունենալով հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, արվեստին վերաբերող հարցերը քննելիս Ս. Տեր-Ներսեսյանը հանդես է գալիս և՛ որպես պատմաբան, և՛ որպես արվեստաբան։ Բանն այն է, որ դարերով պետականությունից զուրկ եղած հայ ժողովրդի պատմությունը ինչ-որ ձևով նրա մշակույթի պատմությունն է։ Այս առումով հիշարժան է Ս. Տեր-Ներսեսյանի հետևյալ միտքը. «Մեր պատմության մեջ հայ արվեստն ու մշակույթն են, որ ունեն հիմնական արժեք միջազգային քաղաքակրթության համար։ Իմ համոզումս է, որ քաղաքական դեպքերի թվարկումից ավելի պետք է ընդգծել

հայ ժողովրդի բերած նպաստը մարդկային քաղաքակրթության՝ արվեստի ու մշակույթի գծով»[11]։

Ս. Տեր-Ներսեսյանի երախտիքներից մեկն էլ այն է, որ գործելով արտասահմանում և իր ուսումնասիրությունները հրատարակելով եվրոպական լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն), նա մեծապես նպաստում է ամբողջ աշխարհում հայ մշակույթի տարածման գործին։ Նրա հայագիտական աշխատությունները սկզբնաղբյուր են եվրոպական գիտնականների համար։ Անգլիայի հնագիտական ընկերության նախագահ Ֆրենսիս Ուորմըլը իրավամբ նշել է, որ «Հայկական արվեստի մասին շատ քիչ գաղափար ունեինք, մինչև որ պրոֆ. Տեր-Ներսեսյանը իր աշխատություններով եկավ նոր հորիզոն բանալու հայկական միջնադարյան արվեստի ասպարեզում»[12]։

Ս. Տեր-Ներսեսյանն անսպառ եռանդի տեր գիտնական է։ Բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ նա տարիներ շարունակ զբաղվել է երիտասարդ կադրերի պատրաստման գործով։ Իր երկարատև մանկավարժական գործունեության ընթացքում դասախոսելով Եվրոպայի և Ամերիկայի առաջնակարգ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, նա պատրաստել է բազմաթիվ բյուզանդագետ-արվեստագետներ։

СИРАРПИ ТЕР-НЕРСЕСИАН

(К 80-летию со дня рождения)

ЛЕВОН АЗАРЯН

Резюме

Иностранному члену АН Арм. ССР Сирарпи Тер-Нерсесиан исполнилось 80 лет. Трудно переоценить тот вклад, который внесла С. Тер-Нерсесиан в изучение армянского средневекового искусства. Однако научные интересы С. Тер-Нерсесиан не ограничиваются армянским искусством; они охватывают также проблемы византийского, копского, сирийского искусств. В ее трудах особое место занимают армяно-византийские отношения.

Широкий круг знаний и большая культура ученого дали возможность глубоко раскрыть целый ряд проблем средневекового армянского искусства. В своих трудах С. Тер-Нерсесиан по-новому осветила ряд важнейших проблем, ставших переломным этапом в области изучения средневекового армянского искусства (становление раннесредневекового армянского искусства, армяно-византийские отношения, киликийская миниатюра и проч.).

Долгие годы С. Тер-Нерсесиан работала в разных высших учебных заведениях (как в Европе, так и в США), воспитывая многочисленные кадры ученых по изучению средневекового искусства.

---

11 «Հայրենիքի ձայն», 1970, № 23։

12 Նույն տեղում։